

|                                                                                                                                           |    |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| Խմբ. - Հաւատք Անցեալին վրայ, եւ Յոյս դէպ ի Ապագան . . . . .                                                                               | 1  |
| ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ                                                                                                              |    |
| Հ. Ղ. Տայեան. - Արքայաժողովրդի մասին . . . . .                                                                                            | 6  |
| Հ. Սամուէլ Արամեան. - Հիւանդաց օժման խորհուրդը Հայ Եկեղեցւոյ մէջ (Հին շրջան) . . . . .                                                    | 8  |
| Արտաւագդ Արքեպ. Սիրմէեան. - Պատմութիւն Հայկական քահանայից (շար.) Տէր Սարգիս քահանայ Հալէպցի (1592-1662) . . . . .                         | 14 |
| Գ Ր Ա Կ Ա Ն                                                                                                                               |    |
| Հ. Ղ. Ալիշան. - Մասնիկ Վասակի դատաստանը (աշխ. թրգ. Հ. Թ. Թումանյան) . . . . .                                                             | 20 |
| Francis Thompson. - Երկնային Խուզակը (The Hound of Heaven). (Ներածութեամբ թրգ. Հ. Մեսրոպ Ճանաչեան) . . . . .                              | 26 |
| Վահան Շահպալ. - Յայդային . . . . .                                                                                                        | 32 |
| Հ. Մ. Յովհաննէսեան. - Չորրորդ բաղնիքը . . . . .                                                                                           | 32 |
| Շարլ Պոտլեր. - Վերացում (թրգ. Հրաչ Բաշարեան) . . . . .                                                                                    | 33 |
| Ք. Ա. Հ. - Գիշեր . . . . .                                                                                                                | 33 |
| Անտրէ Մօրուա. - Պայքարն եւ Ս. Ղազարու մասին (թրգ. Հ. Բ.) . . . . .                                                                        | 34 |
| ՕՐՈՒԱՆ ԳՐԹԵՐ - ԳՐԱԽՕՍԱԿԱՆ                                                                                                                 |    |
| Հրաչ Բաշարեան. - «Տուներու երգը» (Մ. Իշխանի) . . . . .                                                                                    | 47 |
| Հ. Վ. Հ. - Մեսրոպ Արք. Տէր Մովսէսեանի «Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի եւ Դաղի եկեղեցիները եւ վանական շինութիւնները» . . . . . | 52 |
| ՆՇԱՐԱՐՆԵՐ ՄԵՐ ԱՆՄԱՀՆԵՐԷՆ                                                                                                                  |    |
| Հ. Ղ. Ալիշան առ Հ. Արքայաժողովրդի . . . . .                                                                                               | 19 |
| ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ                                                                                                                             |    |
| Վահան Շահպալ. - Արուեստը մեր դարուն . . . . .                                                                                             | 35 |
| Գ Ի Տ Ա Կ Ա Ն                                                                                                                             |    |
| Հետախոյզ. - Ծփուն եկեղեցիները . . . . .                                                                                                   | 53 |
| ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ - ՄԱՀԱԳՐԱԿԱՆ                                                                                                                  |    |
| Հ. Թ. Թումանյան. - Յուշեր եւ նշաններ Հ. Ղեւոնդ Ալիշանի ներքին կեանքին՝ ուխտագրութեան հարիւրամեակին առիթով (1838-1938) . . . . .           | 37 |
| Խմբ. - Պրն. Մեսրոպ Յ. Սէթ՝ նոր պատուոյ աստիճանի արժանացած . . . . .                                                                       | 54 |
| Խմբ. - † Հանգիստ Ամեն. Թորոս Արքեպ. Գաւազեան Պատրիարքի Երուսաղէմի Հայոց . . . . .                                                         | 55 |

|                                                                                                                                              |    |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| Réd. - Notre foi sur le Passé et notre espérance sur l'Avenir . . . . .                                                                      | 1  |
| ACADEMIE ARMENIENNE-PHILOLOGIE                                                                                                               |    |
| P. Léonce Dayan. - Abraham Pierre Ier et le deuxième centenaire de son Siège Patriarcal . . . . .                                            | 6  |
| P. Samuel Aramian. - Le St. Sacrement de l'Extrême Onction dans l'Eglise Arménienne . . . . .                                                | 8  |
| Mgr. Ardavast Surméyan. - Histoire des Prêtres d'Alep (suite) Le Prêtres Sarkis d'Alep (1592-1662) . . . . .                                 | 14 |
| LITTERATURE                                                                                                                                  |    |
| P. L. Alichan. - Le procès de Vassak le traître (trad. en arm. moderne par P. Th. Thomadjan) . . . . .                                       | 20 |
| Francis Thompson. - The Hound of Heaven (trad. en arm. moderne par P. Mesrob Djanchian) . . . . .                                            | 26 |
| Vahan Chahbaz. - Nocturne . . . . .                                                                                                          | 32 |
| P. M. Hovhannessian. - La lierre séchée . . . . .                                                                                            | 32 |
| Charles Baudelaire. - Elévation (trad. par H. K.) . . . . .                                                                                  | 33 |
| P. A. K. - La Nuit . . . . .                                                                                                                 | 33 |
| André Maurois. - Pour Byron et St. Lazare (trad. par H. K.) . . . . .                                                                        | 34 |
| LIVRES DU JOUR - RECENSIONS                                                                                                                  |    |
| Hratch Katcharentz. - «Le chant des Maisons» (par M. Ichkhan) . . . . .                                                                      | 47 |
| P. V. Hatzouni. - «Les églises et les bâtiments des trois grands couvents arméniens: Dattève, Haghardzine et Dade . . . . .                  | 52 |
| DES BRIBES DE NOS IMMORTELS                                                                                                                  |    |
| P. L. Alichan au P. A. Djarian . . . . .                                                                                                     | 19 |
| BEAUX ARTS                                                                                                                                   |    |
| Vahan Chahbaz. - L'Art dans le siècle présent . . . . .                                                                                      | 35 |
| SCIENCE                                                                                                                                      |    |
| Explorateur. - Les églises flottantes . . . . .                                                                                              | 53 |
| BIOGRAPHIE - NECROLOGE                                                                                                                       |    |
| P. Th. Thomadjan. - Des mémoires de la vie du P. Léonce Alichan à l'occasion du centenaire de sa profession religieuse (1838-1938) . . . . . | 37 |
| Réd. - M. Mesrob Seth membre correspondant et professeur de l'Académie Asiatique de Téhéran . . . . .                                        | 54 |
| Réd. - † S. B. Torcom Kouchakian Patriarche Arménien de Jérusalem . . . . .                                                                  | 35 |
| Voir la suite, page 3.                                                                                                                       |    |

# Բ Ա Ջ Մ Ա Վ Ե Պ

## Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ ԹԻԻ 1-2

ՀԱՏ. Ղ.Է. ՈՅԶԸ-ՈՅԶԹ

Վ.Ն.ՆՏԻԿ ՈՒ Ղ.Ա.ՋԱՐ

## Հ Ա Ի Ա Տ Ք Ա Ն Յ Ե Ա Լ Ի Ն Վ Ր Ա Յ

ԵՒ

## Յ Ո Յ Ս Դ Ե Պ Ի Ա Պ Ա Գ Ա Ն

Տան մը հաստատութիւնը եւ տեսականութիւնը անշուշտ էապէս իր հիմքերէն կը կախուի. հիմքեր՝ նիւթական թէ բարոյական՝ որքան ամուր ըլլան եւ ապահով, նոյնքան մեծ երաշխիք կը դառնան անոնք այդ տան և՛ հաստատութեան և՛ տեսականութեան:

Քառասուն դարու մեր գոյութիւնը, քառասուն դարու մեր պատմութիւնը ինքնին խօսուն ապացոյցն է մեր ազգային ու ցեղական հիմքերուն բարձր նկարագրին ու քանկագին արժէքներուն:

Խօստ'ն են մեր Գահերն ու Հարստութիւնները՝ Արշակունեան - Բագրատունեան - Ռուբինեան՝ իրենց աւերակներուն մէջ իսկ այնքան յուզիչ, այնքան ներշնչող:

Խօստ'ն են մեր քաղաքները՝ դիւցազներ ու սուրբեր, անքիւ ու անհատում, զորս տուած է մեր ազգը Քաղաքական ու Եկեղեցական Ընկերութեանց:

Խօսուն են մեր գրական ու գեղարուեստական ամբար յիշատակարաններն ու կոթողները՝ մեր հայրենի սահմաններէն դուրս անգամ, սփռուած ամբողջ քաղաքակիրթ աշխարհի մէջ ու զայն ողողած:

Գահեր՝ որ հիմնուեցան քաղաքակրթութեան ու մեր ցեղի բարօրութեան նուիրուած աննկուն եւ աննուան նիւթերով, Դիւցազներ՝ որ մեր հայրենի սրբութիւնները պահպանելու համար գոհաբերեցին ե՛ւ հանճար ե՛ւ կեանք. Յիշատակարաններ ու կոթողներ պաշտելի, որոնք նահանգը կը շարժեն ամէնէն անգործուն եւ ամէնէն արիւնարբու ցեղերուն անգամ:

Հայրադիմե՛ր, քննեցէ՛ք ու տեսէ՛ք, դարե՛ր ու դարեր մենք քաղաք ենք



շինած ու աւան, պալատ ու տաճար, դպրոց ու վանք ու սփռած բարդած գա-  
նունք մեր ամբողջ երկրին մէջ՝ աստղերուն չափ անթիւ, անունց պէս փայլուն:

Եւ ատիկա գերագանց ապացոյց չէ՞ խոր ու վսեմ հաւատքին՝ որով ոգե-  
ւորուած էին մեր Հայրերը, մեր ամբողջ ցեղը՝ ցեղերուն մէջ ազնիւը, եւ  
ազնիւներուն մէջ նախանձելին:

Քննեցէ՛ք, հայորդիներ՝, ու տեսէ՛ք թէ ո՞րքան հարստութիւն ցեղային  
առաքինութիւններու, որքան զրական գանձեր թողած են մեզի մեր Հայրերը.  
ու զմայլեցէ՛ք այն հաւատքին վրայ որով անունք այնքան հրաշքներ գործեցին.  
մանաւանդ թէ հիմնեցէ՛ք, խարսխեցէ՛ք այդ հաւատքին վրայ՝ Ձե՛ր ալ հա-  
ւատքը՝ աւելի ամուր եւ անվկանդ քան կրանիքը մեր սրբազան լեռներուն,  
քան երկաթն ու պղինձը մեր երկրի ծոցն հանգչող հանքերուն մէջ:

Գործօն ու պայքարող հաւատք մ'էր մեր Հայրերուն հաւատքը. շինեցին  
տուն, կազմեցին զիւր. ու զէն ի ձեռին գայն պաշտպանեցին՝ այն պատգամով  
գոր իրենցմէ առած մեզի կ'աւանդէ Նահապետը.

*Հայոց հաւատք, Հայոց տուն,  
կացցեն աղատ հաստատուն:*

Հաւատք ուրեմն մեր անցեալի մեծութեան ու փառքին՝ որ միշտ կենսու-  
նակ է ու հրաշագործ. պայքար՝ կեանքով եւ մահով՝ անունց դէմ եւ այն ամէն  
բանի դէմ որ կը ժպրհի կողոպտել մեզմէ այդ մեր միակ եւ ամենամեծ գանձը՝  
մեր գոյութեան չափ նուիրական:

Հաւատալ ու պայքարիլ միասիրտ, եղբայրօրէն, սիրտ սրտի, ձեռք ձեռքի,  
ո՛ր ովկէանի ափին, եւ որ անմարդի երկրի մէջ ալ քաջ տարած ըլլայ մեզ  
ահեղ փոքորիկը որ մեզ մեր հիմքերէն սարսեց, սարսեց բայց երբեք չկրցաւ  
փանդել հիմքերը գոր այնքան խոր էին դրած մեր Հայրերը՝ իրենց հաւատքին  
չափ խոր ու հսկայ:

Հարկ է նորոգել այդ հաւատքը, եւ գործել ու պտղաբերել այդ հաւատքին  
ամենագոր ուժով:

Ինչպէս մեր Հայրերը երջանիկ օր մը փարեցան խաչին, փարէ՛նք մե՛նք ալ.  
անունք հաւատացին ու նուիրագործեցին Հայ Գիրն ու Հայ մշակոյթը. հաւա-  
տանք ու նուիրագործեցին մենք ալ:

Մեր քշմամիները ամէն ինչ փանդեցին ու աւերեցին, բայց ո՛չ բնաւ մեր  
Հաւատքն ու Գիրը, մեր Հայ լեզուն ու Հայ մշակոյթը, երկուքն ալ անմահ  
մեր հոգւոյն պէս, երկուքն ալ անձեռնմխելի:

Եղբայրացած խաչն ու Գիրը կոչ կ'ընեն հաւատքի ու պայքարի. ամէն  
հայորդի պէտք է հաւատայ ու կռուի այդ խաչին համար, ամէն հայորդի այդ  
Գիրն համար. վա՛յ անոր որ մէկը կամ միւսը կ'ուրանայ. անէծքն է որ եր-  
կընէին ու երկրէս զինքը կը շանթահարէ: Սոսկալի է արդարեւ յիշատակն ան-  
գամ վասակներու եւ իրենց եղբրական կատարածին:

Տնաւեր, բոյնէ գուրկ պանդուխտ հայորդիներ, քանի՛ քանի անգամ մեր  
Հայրերը իրենց հին հաւատքով նոր ու միշտ նոր բոյն, նոր տուն են շինած.  
Եկէ՛ք դարձեալ նոր բոյն շինենք: Այդ չի՞ պատմեր Ծիծեռնակի երգին մէջ մեր  
հերթողը, այնքան շնորհալից պատկերով.

*Ծիծեռնակը բոյն է շինում - Ե՛ւ շինում է Ե՛ւ երգում.  
Ամէն մի շուղ կպցընելիս - Առաջւան բոյնն է յիշում:*



1607-71

*Նա յիշում է անցեալ տարւան - Իր սընուցած ձագերին,  
Որոնց չատերն յափշտակեց - Արիւնարբու թըշնամին:*

*Մի անգամ էր նա բոյն շինել - Շատ անգամներ կարկատել,  
Բայց այս անգամ վերադարձին - Բոյնն աւերակ էր դըտել:*

*Բայց նա դա՛րձեալ բոյն է շինում - Ե՛ւ շինում է Ե՛ւ երգում.  
Ամէն մի շուղ կպցընելիս - Առաջւան բոյնն է յիշում:*

Մեր Հայրերէն ժառանգած ենք հայու սիրտ, հայու գիր, հայու բարբառ:  
Ահա ինչ որ պիտի շինենք. մեր բոյնն ու տունը՝ մեր հարագատ սերունդն է:  
Ահա այդ սերունդին է որ պէտք է տանք հայու սիրտ, հայու գիր, հայու  
բարբառ:

Եւ այն ատեն մեր բոյնը նորոգուած է, մեր աւերակը վերաշինուած:  
Հայ ծնողք, ձեր գաւակներուն տուէ՛ք՝ հայու սիրտ՝ ինչպէս էր Ղեւոնդինն  
ու վարդանինը, ինչպէս էր Նարեկացւոյնն ու Շնորհալոյնը:

Հայ ծնողք, ձեր գաւակներուն հայ գիր տուէ՛ք՝ առաջին շիքին հետ մայ-  
րենի կաթին, առաջին կոչին հետ իր անուան՝ որ հայու անուն է:

Հայ ծնողք, ձեր գաւակներուն տուէ՛ք հայու լեզուն, չճնաղը լեզուներուն  
մէջ: Ու այդ լեզուին հետ եւ անոր մէջ մեր ցեղին աւանդութիւնը՝ իր փառքե-  
րով, իր պարծանքներով:

Այսպէս, այդ գաւակները պիտի մեծնան արի ու բարի, քաջ ու ազնիւ, ազ-  
նիւ ըլլալու համար իրենց Հայրերուն պէս. ու այդպէս պիտի ըլլան մեծ՝ իրենց  
հայրերուն նման, պիտի ըլլան ուրախութիւն իրենց Հայրերուն նման:

Եւ ահա վերաշինուած բոյնի տեսիլքին մէջ, հայասիրտ ու հայալեզու  
սերունդին մէջ եւ անոր դիմաց՝ կը ցրուի մատախուղը թանձր որ բռներ է կար-  
ծես հայ հորիզոնը, ու նոր կորովով որ մեծ ու երիտասարդ ազգերունն է՝  
պէտք է վարգել յառաջ:

Եթէ մեծ ու յաղթական ազգեր մտահոգ իրենց վաղուին՝ նոր տեսլական-  
ներ կը փնտռեն, նոր ընկերական կարգեր, նոր աշխարհակալութիւններ, մենք  
յստակօրէն ունինք մեր առջեւ մեր տեսլականն ու գործունէութեան ուղին.  
մեր հնութեան հաւատքը՝ լաւագոյն եւ պայծառագոյն յոյսն է մեր վաղուան.  
ամէն հայածին՝ որ հայ կ'ապրի՝ հայու սրտով ու լեզուով եւ հայ աւանդու-  
թեանց սիրով՝ հայրենիքի մարմնացում է եւ վերաշինութիւն. երբ սիւներն ու  
կամարները պատրաստ են՝ շէնքը շուտ կը շինուի, եւ մենք արդէն նիւթականէն  
առաջ մեր հոգւոյն մէջ անոր հաւատացած ու գայն շինած՝ վաղը եւ ամենամօտ  
վաղը գայն պիտի կազմենք ու գետնեցինք՝ ինչպէս սիրտ սրտի հետ, այսպէս  
քար՝ քարի, սիւն՝ սիւնի, եւ կամար՝ կամարի. եւ ահա Նահապետի տեսիլքին  
պէս վերաշէն Անիի, մենք ալ կը գոչենք.

«Ողջո՛յն քեզ նոր Հայաստան, երկիր դիւցազներու եւ սուրբերու, ողջո՛յն  
քեզ յարութիւն եւ ուրախութիւն ամէն հայ սրտերու, ամէն Հայ սրտերու որ  
փու հաւատքովդ ապրած՝ փու ապագայովդ պիտի երջանկանան»:

ԽՄԲ.